Ծագման երկրի սերտիֆիկատի ստացման գործընթացի պարզեցում

2014թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1772-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Վերոնշյալ որոշման նախագծի ընդունումն ուղղված է **ծագման երկրի սերտիֆիկատի ստացման գործընթացի պարզեցմանը**, մասնավորապես.

- Սահմանվել է, որ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի պաշտոնական կայքում պետք է տեղադրվի ապրանքի երկրի ծագման սերտիֆիկատի և փորձաքննության ակտի ստացման վերաբերյալ մանրամասն ուղեցույցը, ինչպես նաև փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերի սպառիչ ցանկը, ինչը տնտեսվարողների համար էլ ավելի հասանելի կդարձնի ծագման երկրի սերտիֆիկատի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Սահմանվել է, որ տնտեսվարողը կարող է ստանալ միայն ապրանքի ծագման երկրի փորձաքննության ակտ՝ առանց ծագման երկրի սերտիֆիկատ ձեռք բերելու, ինչը հնարավորություն կտա նախապես իրականացնել ապրանքի փորձաքննություն և ստանալ ակտ, իսկ հետագայում վերոնշյալ փորձաքննության ակտի առկայության պարագայում մեկօրյա ժամկետում ստանալ ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատ:
- Նախկինում մշտական անվանացանկի ապրանքի ծագման երկրի փորձաքննության ակտը տրվում էր մինչև մեկ տարի ժամկետով, ինչը տնտեսվարողների համար լրացուցիչ խոչընդոտներ էր ստեղծում արտահանման աշխատանքներ իրականացնելիս, ավելացնում էր վարչարարությունը՝ հանգեցնելով լրացուցիչ ծախսերի և ժամանակի կորստի: Կատարված փոփոխություններից հետո մշտական անվանացանկի ապրանքների ծագման երկրի փորձաքննության ակտը տրվելու է անժամկետ՝ այն դեպքում, երբ ապրանքների արտադրական պրոցեսում փոփոխություններ չեն կատարվել:

Վերոնշյալ որոշման նախագծի ընդունումը ևս մեկ դրական քայլ է տեղական ընկերությունների արտադրանքն արտահանելու համար սահմանված ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ: